

“Հրեշտակ”, “Վերածնունդներ”, Ա. Ծատուրեանի.  
 “Ժլար սասկեր”, Տէր Գեորգեանի. “Առաջիկ  
 եղբայրներ”, Տէր Զարարեանի եւ այլն: Յոբելանի  
 տօնախմբութեան մէջ Ռուսահայք չեն ուզեր ան-  
 տարբեր մնալ: Հրատարակչական ընկերութիւնը  
 պատրաստած է բանաստեղծին ընդարձակ կեն-  
 սագրութիւնն եւ անկէ զատ՝ բանաստեղծու-  
 թիւններուն հայերէն մի փոքր շքեղ հաւա-  
 քածոյ, նոր թարգմանութիւններով: Հաւանա-  
 կան է, որ այն օրւան համար ուրիշ թարգմա-  
 նութիւններ կամ ժողովածոյք ալ երեւան  
 ելլեն:

Թիֆլիս քաղաքն, որ արդէն մասամբ կա-  
 տարած է իր պարսքը՝ Մայիսի 26ին դարձեալ  
 պիտի մասնակցի ընդհանուր ուսական տօնա-  
 խմբութեան, նոյնպէս եւ Վովկասի քանի մ'ու-  
 րիշ քաղաքներ:

Տփղիս, 3/15 Մայիս 1899:

Կ. ՏՈՒՐԵԱՆ



### Ի ԹԻ ԹՎ ՏՈՔԹ. ԳԱՐՐԻԷԼ ՓԱՍՍ ՍԵՒԵԱՆ

Բարունակ Պէյ Ֆերուհիան, Յակոբ Պէյ  
 Յովհաննէսեան բժիշկներէն վերջը, չէի կրնար  
 լռութեան մէջ թողուլ ասոնց ոչ նուազ նշա-  
 նաւոր մէկ ընկերը, Տոքթ. Գարրիէլ Փաշա  
 Սեւեան՝ կարող բժիշկը, պատուական Հայը,  
 հմուտ մատենագիրը, որ դարուս կէսին Կ. Պոլսոյ  
 բժշկական վարժարանէն վկայուած սա-  
 կաւածիւ հայ բժիշկներու խումբին կը վերա-  
 բերի, եւ է՝ արդի թրքահայ բժիշկներուն ալ  
 ամենէն երիցագոյնը:

Բժշկական եւ գրական կիսադարեան գոր-  
 ծունէութեամբ ծերացած, Տոքթ. Գարրիէլ  
 Փաշա Սեւեան, եղած է Օսմանեան Պետու-  
 թեան ծովային զինուորական առաջին հայ  
 բժիշկը:

Բաղմահմուտ եւ քաջարուեստ, որով իւր  
 Տէրութեան մատոյց գնահատելի մեծ ծառայու-  
 թիւններ եւ հասաւ Փաշայութեան աստիճանին,  
 ծանօթ է նաեւ հայ-գրական աշխարհին՝ իրրեւ  
 ներհուն գրագէտ, քաղցրերգակ բանաստեղծ եւ  
 կարող գրիչ:

Եւ այս մեծ մարդն է, զոր կ'ուզեմ ներ-  
 կայացնել այսօր, այս մեծ մարդը, որ մանի-

1 Այն փողոցն ուր Պուշկին Թիֆլիս եղած ժամա-  
 նակ բնակած է՝ այժմ Պուշկինեան փողոց կը կոչուի: այն-  
 տեղ նաեւ սիրուն պարտէզ մի անկուած է Պուշկինի  
 անուն, ուր կ'իջիէ բանաստեղծին բրոնզէ կիսարձանը:

շակի պէս խոնարհ ու համեստ, մանիշակի պէս  
 ծածկիլ, անծանօթ մնալ միշտ սիրած է. ծած-  
 կիլ եւ ղողիլ, բայց քաղցրաբոյր հոտերով  
 յայնուիլ. որչափ դժուար է այսպիսի անձնաւո-  
 րութիւն մը ճշգրտատիպ նկարագրել:

Զուակ Կեսարիայի դաղթական Հայ  
 ծնողաց, Տոքթ. Գարրիէլ Փաշա Սեւեան, ծնած  
 է Բերա Կ. Պոլսոյ 1822 թուին Յունուարի 6ին.  
 Ճիշդ 11 ամիս առաջ Ասլանեան Տոքթ. Ստե-  
 փան Փաշայէն, որ ծնած է նոյն տարւոյն Գեկ-  
 տեմբեր 29ին:

Հօրն անունն էր՝ Յովսէփ, մականունը  
 Խարայեան, զոր Գարրիէլ, բժիշկ վկայուած  
 տարին, փոխած, ըրած է՝ “Սեւեան”:

Յովսէփ Խարայեան թէեւ գաւառացի,  
 բայց ըստ բաւականի ուսեալ, կամ աւելի ու-  
 սումնատենչ, մեծ խնամք կը տանի իւր զաւակ-  
 ներուն կրթութեան, որոնց չորրորդն էր ապագայ  
 բժիշկը՝ Գարրիէլ:

Գարրիէլ իւր առաջին դաստիարակու-  
 թիւնը կը ստանայ Կ. Պոլսոյ այն ատենեան թա-  
 ղային վարժարաններուն մէջ, որոնց եւ ոչ մէկը  
 կը յաճախէ օրինաւորապէս, վասն զի ամէն  
 անգամ որ ծնողքը բնակավայրը փոխէին, ինքն  
 ալ կը ստիպուէր վարժարանը փոխել:

Աւելորդ է ըսել, թէ Գարրիէլի սորվածն  
 այսպէսով մեծ բան մը չէր. որուն համար հայրն  
 Յովսէփ աղա, իւր որդւոյն աւելի բարձր կրթու-  
 թիւն մը տալու տենչիւ, կը յղէ զայն Վիեննայի  
 Միխիթարեանց վանքը, ուր նա ապագային, հա-  
 մաձայն մօրը փափաքին, պիտի գրկէր եկեղե-  
 ցական ասպարէզը:

1835 Յունիս 15ին, Գարրիէլ Խա-  
 րայեան, հազիւ 13 դարուններ տեսած, կը սկսի  
 աշակերտիլ Վիեննայի Միխիթարեանց դպրոցը,  
 ուր՝ ըստ օրինի անունը փոխելով եւ Եսայի  
 կոչուելով, կը շարունակէ ամբողջ ութը տարի:

Վանական ուսանողութեան այս շրջանն  
 յաջողութեամբ լրացնելէն ետքը, երբ եկեղե-  
 ցական կեանքի ուխտն ընելու ժամը կը հնչէ,  
 Սեւեան ետ կը կենայ. անկարող կը զգայ զինքը.  
 կը թողու Եսայի անունը, որով քահանայ պիտի  
 ձեռնադրուէր, եւ դարձեալ ըստ առաջնոյն  
 Գարրիէլ կոչուելով, կը հեռանայ վանքէն՝  
 1843 Գեկտեմբեր 20ին:

Ի բնէ ուշիմ եւ հանճարեղ, փայլուն  
 յառաջադիմութեամբ նշանաւոր ըլլալով է որ  
 կը թողու նա Միխիթարեանց ուսումնարանը, ուր  
 աշակերտակից կ'ունենայ, ապագայ խոստացող  
 ընտիր երիտասարդներ, որք չեն բաժնուիր